

ԳՐԱԿԱՆ

ՏԱՂ ԳԵՂԵՑԻԿ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ

(Ձեռագիր Տաղարանի մը փառած)

Կայր Կոյսն ի յայրին,
 կայր եւ երկնանայր,
 Կամէր ծընանել
 զկեանս ազգի մարդկան.
 Կոյսրն ծընանէր
 զկեանս ազգի մարդկան.
 Կայծակնասեպիլ
 կարմրափայլ ամպոյն
 Կացեալ սիւն յուսոյ
 կանգնեալ ի վերուս,
 Կարեւոր խմբից
 կանչեն ի յերկնից
 Կենարար ծընաւ
 կեցուցիչ բազմաց.
 Կերպ մի ի զընդէն,
 կարգ մի ի քրոցն
 Կանչեն առ հովիւս
 կարեւոր կոչմամբ
 Կըրկնեալ առ նոսա
 կրթական մըսամբ
 Կարեւոր յուսով
 կանխեալ ի յերկնուս:
 Կոչէր խորհրդով
 կարապետին մայր
 Կախաւէր փութով
 կարեւոր պառան.
 Կոյսրն ծընանէր,
 Կոյսրն ծընանէր:
 Կորուսեալն Եւա
 կողոպտեալ կենամբ
 Կանգնեցաւ ի վեր
 կայր մօտ առ Կուսին
 Կոչեանեալ անձամբ
 կորափիտ կերպիւ
 Կանգնեցաւ ի վեր
 ի կործանմանէն.
 Կոյսրն ծընանէր,
 Կոյսրն ծընանէր:

Կարմրաւաս այսիւմ
 կապուսակ շքամբ
 Կոնոպեալ հերամբ
 կայքէր արտառուամբ,
 Կեղկեղեալ մարմնով
 կարկառէր զբազուկան
 Կըրնէր զասամունսն
 կոծէր յոյժ ըզկուրծան:
 Կանչեալ մեծաձայն
 կոչէր զնախահայրն
 Կանգնեալ Աղամայ
 ի կործանմանէն.
 Կողկողէր բազկամբ
 կրոչէր արտառուամբ.
 Կենարար Փրկիչ
 կեցոյ զկործանեալս.
 Կոյսրն ծընանէր,
 Կոյսրն ծընանէր:

Կայքելով հովուական
 կոչաւէր զառանց
 Կապուսակ ուլիցն
 կումբ առեալ կայքեն.
 Կէտք են երկուցեալ
 կայսամբ են սարսեալ
 Կարկեալք գետք գղէմս
 կոծեն ծովք պէտամբ.
 Կայր Տէրն ի վերայ
 կապուսակ գեոյն,
 Կամէր մկրտել
 կարապետին բազկամբ.
 Կայր Հայր ի վերուս,
 կանչէր Յովհաննէս.
 Կայր դա իմ որդի,
 կամաց կասարող.
 Կայր եւ Սուրբ Հոգին
 կապուսակ ամպով
 Կայծակնագունով
 կերպիւ աղանայն.
 Անդ սարենն Հայր Տէր, որդի Միածին
 Հոգին հոճարիտ յախեանց ամէն: